ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հուլիսի 2024 թվականի N 1068 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի N 1060-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունիսի 29-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ՊՐՈՖ ԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայաց-ված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 1060-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) հավելվածի ցանկը 17-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 18-19-րդ կետերով.

«

18.	3916200000	ՊՎՔ պրոֆիլներ	ՊՎՔ պրոֆիլներ և ՊՎՔ լամինացված պրոֆիլներ դուռ պատուհանների համար	կգ	3 000 000	Հունաստան, Գերմանիա, Ավստրիա, Իտալիա, Բելգիա, Բուլղարիա, Թուրքիա, Լեհաստան, Ֆրանսիա	Հունաստան, Գերմանիա, Ավստրիա, Իտալիա, Բելգիա, Բուլղարիա, Թուրքիա, Լեհաստան, Ֆրանսիա	2 100 000 000	
19.	3920431009	Պոլիմերային թաղանթ	Պոլիմերային գունավոր թաղանթ ՊՎՔ պրոֆիլների լամինացման համար մինչև 1 մմ հաստությամբ	կգ	30 000	Հունաստան, Գերմանիա, Ավստրիա, Իտալիա, Բելգիա, Բուլղարիա, Թուրքիա, Լեհաստան, Ֆրանսիա	Հունաստան, Գերմանիա, Ավստրիա, Իտալիա, Բելգիա, Բուլղարիա, Թուրքիա, Լեհաստան, Ֆրանսիա	240 000 000	

».

2) հավելվածի ցանկի «Ընդամենը» պարբերությունում «41 828 000 000» թիվը փոխարինել «44 168 000 000» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

11.07.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ